

բան վաստրկելու և պատերազմին մէջ մտնալու համար. բայց ոչ ոք անոնցմէ ետ դարձաւ .»¹

«Վշխանին¹ հետ եկան չորս գուսանք 'ի Ս'եծ Հայոց, որք եղբարք էին. ասոնք Արուսաղէմ ուխտի կ'երթային, և երեք փող ունէին, որոց ձայնը երեսնին կը զարնէր: Այլք կը սկսէին փողերն հնչեցընել, կարծես թէ լճակէն եկող կարապներու ձայն էր, և անանկ քաղցր ու շնորհալիներդաշնակութիւններ կը հանէին, որ լսողը կը հիանար: Իրեք զարմանալի պար կը բռնէին. ոտքերնուն տակ տախտակ մը կը դրուէր և իրենք ոտքի վրայ կեցած՝ կըր կը դառնային, անանկ որ ոտքերնին միշտ տախտակին վրայ կու գար նորէն. երկուքը գլուխնին դէպ 'ի կռնակնին ծռած կը դառնային, նոյնպէս անդրանիկն ալ. և երբոր գլուխը դէպ 'ի առջև դարձընել կու տային անոր, կը խաչակնքէր երեսը. որովհետև կը վախէր որ չըլլայ թէ դառնալու միջոցը վիզը խորտակի .»²

«Հոն² եկան ինծի շատ մը ժողովուրդ Ս'եծ Հայոցմէ, որոնք Արուսաղէմ ուխտի կ'երթային, մեծ հարկ վճարելով Սարակինոսաց որ իրենց կ'առաջնորդէին, հետերնին թարգման մը առած՝ որ իրենց և մեր լեզուն զիտէր: Ինոր ձեռքով աղաչեցին ինծի որ ցուցնեմ իրենց՝ սորբ Խափափորը: Այս ալ գացի Թագաւորին, որ վրանի մը մէջ նստեր էր, վրանին ցցին կութընած, և աւազին վրայ առանց գորգի և առանց ուրիշ բանի մը նստած: Բոի իրեն. «Տէր արքայ, դուրսը շատ ժողովուրդ կայ Ս'եծ Հայոցմէ որ Արուսաղէմ կ'երթան, և կ'աղաչեն ինծի, տէր արքայ, որ Սորբ Խափափորը ցուցնեմ իրենց. բայց ես դեռ քու նշխարքդ պագնելու չեմ ցանկար .» (Թագաւորն ախորժով ինտաց, և ըսաւ ինծի որ երթամ բերեմ զանոնք. և ես կատարե-

1. Անտիոքայ իշխանն՝ Բեհմնտ Զ' գնաց 'ի Ես. ֆա առ Սուրբն Լուգովիկոս արքայ Գաղղիոյ:
2. Ա. յսինքն Ա. քեհա:

ցի: Այլ երբոր տեսան Թագաւորը, Աստուծոյ յանձնեցին զինքը, ինքն ալ զանոնք .»¹

Նոր-Բրիտանիոյ մեծ արշիպեղաւ գուր:

Այս երկիրս Բաբուայի արևելեան կողմը կ'իյնայ, որմէն անձուկ նեղուցով մը կը բաժնուի. Տամբիէն անուամբ նաւորդը գտաւ 1700^ն, և իրեն ա. նուամբը կոչուեցաւ նաև նեղուցն ալ:

Վշխաւոր կղզիներն են՝ Նոր-Նորի. տանիա, և Նոր-Նուրնտա, որոնք իրար մէջ Ս. Վեորգայ ջրանցքովը կը բաժնուին: Արկիրը բարձրաբերձ լեռնե. րով լեցուն է, որոնց շրջակայ բլուրնե. րը և կղզւոյն արևանց վրայի ժայռերը մանաւանդ Նոր-Նուրնտիոյ, ածխային և կրային են՝ հին արևանց վրայ նոր շինուած որմերու նման: Արկիրը հրաբխային է, անտառուտ, և ջրարբի բուսաբերութիւնը շատ բեղնաւոր:

Այս կղզեաց բնակիչքը Բաբուացւոց ցեղէն կ'իջնան, բայց ասոնց հասա կը աւելի բարձր է և դէմքերնին աւելի վայելուչ. իրենց տաճարներուն մէջ հաւասարապէս կը պաշտեն մարդաձև չաստուածներ և կենդանիներ: Այս պատմեն որ մարդագոհ ալ կ'ընեն. բայց 1825^ն նոյն կողմերը քաղող ճանապարհորդ մը անտոյգ կը հանէ այ կարծիքս, և ընդ հակառակն կը հաստատէ թէ շատ ազնուաբարոյ են մարդասէր և հիւրընկալ: Այս կղզիներէս ոմանք դեռ ևս լաւ ծանուցուալ են: Նոր-Նորիտանիան արշիպեղաւգոսին մէջ ամենէն մեծ կղզին է. մէջ բնակիչքը շատ ճարտար են մասնաւոր նաւակներ շինելու, որոնք տասնէ մինչ տասնեօթը մէզը երկայնութիւն կ'ունենան:

Նոսիկայի կղզի: ՏՄՆորըբասոզ որ 1792^ն այս կողմերս մեծաւ մասաւ պտըտեցաւ, այս կղզւոյս բնակչաւ



Բնակիչ Նոր-Իսրայելսիոյ :

վրայ այսպիսի հետաքրքրական բան մը
կը պատմէ .

“ Եւրոպացիները ստիպուեցան ետքը տեսնալով որ վերջապէս կղզւոյս բնակիչները չկարենամ պիտի քուլս մօտեցընել, ուզեցի հրահաղի փորձ մը ընել, որուն սկիզբը ճայթմամբ սկսի, և կարենայ նախ իրենց վարմանքը շարժել, և ետքէն ալ հետաքրքրութիւն բերել : Եւրոպացիները հրահաղը օգուն մէջ արձրկուեցաւ, մէկէն ’ի մէկ խորին լուծիւն մը պատեց . երբոր օգուն մէջ բարձրանալէն ետքը բոցափայլ անձրևով մը սկսաւ վար թափլթրփիլ, վախցան և սկսան տապնապով փախչիլ : Վիչ մը ետքը երբոր սկսան մտիկնալ, մեծ գգուշութեամբ ու վախով կը մերձենային : Եւ ատեն մտա-

բոր հրահաղը օգուն մէջ արձրկուեցաւ, մէկէն ’ի մէկ խորին լուծիւն մը պատեց . երբոր օգուն մէջ բարձրանալէն ետքը բոցափայլ անձրևով մը սկսաւ վար թափլթրփիլ, վախցան և սկսան տապնապով փախչիլ : Վիչ մը ետքը երբոր սկսան մտիկնալ, մեծ գգուշութեամբ ու վախով կը մերձենային : Եւ ատեն մտա-

ծեցի որ տախտակի մը վրայ գամերու և ուրիշ փոփոխութիւն ընելու նիւթերու հետ թղթէ շրջապատով ճըրագ մը դնեմ, որպէս զի ծով ձգելէն վերջը երբ ալեաց ծփելու ըլլան, իրենք կարենան տեսնել և առնել: Բայց ընդհակառակն իրենք ասկէ աւելի վախցան, տեսնելով որ այս լոսը նաւերնէս հեռանալով ջուրին վրայէն դէպ 'ի իրենց վրայ կը քալէր: Ար կարծէին անշուշտ որ այս ալեաց վրայ թափառող լուսոյն առաջ երթալուն մէջ գաղտնիք մը ըլլայ, որովհետև լոյսն որչափ որ իրենց կը մօտենար՝ իրենք ալ նոյն չափով կը հեռանային անկէ ազազակելով և կատաղի և հայհոյանաց ձայներ հանելով. այսպէսով վերջապէս բոլորովին հեռացան: Արովհետև օդը հանդարտ էր և ծովը խաղաղ, անոր համար երկու ժամի չափ վառեցաւ լոյսը: Արբոր բնիկները ցամաք հասան, տեսնելով իրենց զարհուրած իրին ոչընչութիւնը՝ ծիծաղի նիւթ մը եղաւ: »:

Երբ-Իւլանոս: Բայ կղզւոյս բնակիչներն ալ Բաբուայի բազմաձիւղ ցեղէն յառաջ կու գան. մորթերնին սև է, բայց մէկ անորոշ գոյն մ'ունին, որ դեղնի և թուխի խառնուրդ ըլլալով թանձր գոյն մը առած է: Հասակնին բարեչափ է և ընդհանրապէս հինգ ոտքէ մինչև հինգ և երկու բթաչափ բարձրութիւն ունին: Բնդամենին սևամորթից պէս նուրբ և փոքր չէ, բայց ոչ ալ Բոլինեզիացւոց պէս բարեձև է: Ազգերնին գանգուր է և մինչև ուսերնին կը թողուն. ծերերը մօրուքներնուն մասնաւոր ինամբ կը տանին և երկայնագէս են: Բայ կղզւոյս բնակիչքը և մանաւանդ երիտասարդները իւղային նիւթ մը կը քսեն մորթերնուն վրայ, որով մասնաւոր յատկութիւն մը կ'ունենայ մորթերնին և ողորկութիւն կ'աւանու: Բայ կողմերս տեսակ մը բորսաութիւն կայ, որ փոխադրական ալ ըլլալով շատ ջարդ կ'ընէ:

Տարեց մարդկանց գէմքը ցուրտ և հանդարտ պարզութիւն մը կ'աւանու, որով յայտնի կ'ըլլայ տարիքներնուն

շատութիւնը: Բայց բնիկ երիտասարդները ինչպէս ուրիշ ամէն տեղ, նշանաւոր են իրենց գործոց մէջ, այսինքն յանդուգն ձեռնարկութիւններով և աշխոյժ և ազնուական ոգւով: Եթէ այս ժողովրդոց գծագրութիւնը քննենք, զարմանալի երևոյթ մը կը տեսնենք, որ ոմանք խարդախ նայուածք մ'ունին, ուրիշները կասկածաւոր և արհամարհական, կան ալ որ ազնուական բարեսրտութիւն մը կը ցուցնեն: Կեանքերնին ընդհանրապէս մէկմէկու որովայններ լարելով կ'անցընեն և կամ ուրիշներէն պաշտպանուելու. բայց ընդհանրապէս կը գովուի իրենց մարդասէր հիւրընկալութիւնը:

Հայադիր¹

Արեգի Լ. - Յունուարի 6:

Տարւոյն առաջին ամիսն՝ մեր կիսագնտին վրայ, գրեթէ ամէն տեղ ըստ կերպարանաց բնութեան տխուր է, քիչ շատ խոր ձմեռն ըլլալով, զոր քաղաքական և եկեղեցական տօնք միութարեւ և յիշատակք անցելոց զբօսեցընեն: Բայ ատեն մեր Հայաստան աշխարհին երեսն այլ ամենէն սգակերպ և ծանր երևոյթներէն մէկը կ'ընծայէ. գրեթէ բոլորովին ձիւնով և սառամանեօք ծածկուած, ձմեռն հոն իր աթոռոյն վրայ անշարժ կ'երևի. կամ բուքերով երկինք երկիր մրրկելով, կամ թէ և պարզ ընէ՝ անանկ չոր և բարակ ցուրտ մը կու տարածէ օդուն մէջ, որ արևն պայծառութիւնը միայն պահած և կրակը մարած կարծուի: Հասպա գիշերը. երբ չորցած սառնապատ ծառոց

1. Մեր եկեղեցական կարգաւորութեան գրոց մէջ Տօնացուցի և Տօնամակի հետ յիշուի նաև ՀԱՅՏՈՒՐ գիրք կամ ցուցակ մը, և կ'երևի թէ եր տօնից և յիշատակաց ցուցակ և կարգաւորութիւն բնիկ հայկական ամսոց կարգաւ շարուած: Այս անունը 'ի գործ ածեմք հոս իբրև նշանակող օրացուցի մը մեր ազգային յիշատակաց: